

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ
ՀԱՆԳՐՎԱՆ. Ռ. ԲԸՐՆՍ, Վ. ՍԱՐՈՅԱՆ, Ջ. Դ. ՍԵԼԻՆՋԵՐ**

Բանալի բառեր – բառապատկեր, խոհափիլիսոփայական տարածություն, գեղագիտական համակարգ, գրական երկխոսություն

Ըստ Ռոլան Բարտի՝ «Ամեն մի տեքստ ինտերտեքստ է, տարբեր տեքստերը նրա մեջ ներկա են տարբեր մակարդակներով և առավել կամ պակաս ճանաչելի ձևերով՝ նախընթաց մշակույթի տեքստերը և շրջապատող մշակույթի տեքստերը: Ամեն մի տեքստ նոր հյուսվածք է՝ գործածված հների քաղվածքներից»¹: Տեսաբանների կարծիքով՝ մարդկային ուղեղը գերհագեցած է իր ճանապարհին տարբեր մտքերի հետ հաղորդակցումից մնացած տեքստ-կոդերով, որոնք, ժամանակ առ ժամանակ արտաքին միջավայրից ստանալով ներքին ազդակներ, արթնանում են մեր ենթագիտակցական շերտերում և առաջ մղվելով դեպի գիտակցական տարածություն՝ մեր մտքերի, աշխարհի գնահատումների մեջ դառնում են նոր տեքստ-կոդեր՝ հիմքում պահպանելով նախորդ տեքստ-կոդերի նախնական կառուցվածքային-իմաստային շերտերը: Իսկ գրողների մոտ, ըստ տեսաբան Մ. Բախտինի, դա համարվում է գրական երկխոսություն: Այսինքն՝ գրական երկխոսությունը այն հոգևոր-խոհափիլիսոփայական տարածությունն է, որտեղ ստեղծագործական երկունքի պահին գրողը երբեմն գիտակցաբար, երբեմն անգիտակցաբար լուռ գրույց է ունենում ենթագիտակցական շերտերում ննջող գրական պատկերի, կերպարի, անգամ բառի հետ՝ սուզվելով բառ-պատկերի խոհական ընկալումների բազմաշերտ տարածությունների մեջ: Լռության մեջ սկսված գրական երկխոսությունը հզոր ազդակներ կարող է տալ գրողի ստեղծագործական մտքի թռիչքին, և ժամանակների ու տարածությունների խաչաձևումների ծիրում կարող են ծնվել նոր գեղարվեստական պատկերներ, որտեղ բառ-պատկերի նախնական հուզական-խոհական դաշտը ավելի է լայնանում՝ բացելով մարդկային խոհի նորանոր շերտեր:

Տարեկանի արտ գեղարվեստական պատկերը՝ որպես գրական երկխոսության հանգրվան, միավորել է երեք սաղանդավոր հեղինակների՝ Ռոբերտ Բըրնս, Վիլյամ Սարոյան, Ջ. Դ. Սելինջեր: Տարեկանի արտ գեղարվեստ-

¹ Западное литературоведение XX века. Энциклопедия, Москва, 2004, с. 164-165.

տական պատկերը նախնական ձևավորումը ստացել է Ռ. Բըրնսի «Այգու դուռը թաքուն բացել» բանաստեղծության մեջ: Շոտլանդացի բանաստեղծը ստեղծել է գյուղական կյանքի հովվերգական մի պատկեր, որտեղ երևում է մարդկային սիրատարփի հույզերի տաք ու ջերմ խայտանքը մարդկային հոգում: Բանաստեղծության քնարական հերոսուհին՝ Ջենին, սիրո ձայնին ունկնդիր, սիրո թևերի ճախրանքով թաքուն հասել է տարեկանի արտ, որտեղ սիրելիի գրկում մոռանում է աշխարհի բոլոր տխուր գույները, սիրո հուզախառն ալեվետումները մոռացության են տալիս ցուրտը, թաց զգեստից առաջացած դողն ու սրթսրթոցը, որովհետև սիրելիի գրկում ջերմանում են հոգին և մարմինը:

Բայց եթե մեկն ինչ-որ մեկին Ու ի՞նչ ցավն է մեր ամենքի,
Տարեկանի արտը կանչել Թե ինչ-որ մեկը մթնում
Ու սեղմել է նրան կրծքին, Համբուրել է ինչ-որ մեկին
Ի՞նչ կարող ես անել: Տարեկանի արտում¹:

Տարեկանի արտ գեղարվեստական պատկերը խորհրդանշում է մաքրամաքուր հույզերի տարածություն, որտեղ չպետք է թափանցեն հասարակության կույր հետաքրքրությունից ծնված գնահատումներն ու երևույթի արժևորումները: Աստվածային սիրո այդ տարածությունն այնքան անձնական է, այնքան հեռու ուրիշների ճիշտ կամ սխալ մեկնաբանություններից... Սրբագույն այդ հույզերի, սիրո արբեցումի ալիքներում աշխարհի խռովքներից տարանջատված այդ աշխարհագրական եզերքը՝ տարեկանի արտը, գեղարվեստական պատկերի մեջ ընդգրկում է մարդու և աշխարհի բախումների, մարդկային փոխհարաբերությունների գնահատումների խոհական տարածք՝ դառնալով սիրո տիեզերական ուժի և հասարակության այդ մաքրամաքուր ափը թափանցելու և իր գրված ու չգրված օրենքներով այն աղարտելու հավերժական խնդրի խորհրդանիշ:

Ռ. Բըրնսի մոտ տարեկանի արտը՝ որպես աշխարհագրական իրողություն, տեսանելի է: Բանաստեղծական խոսքում այն ձեռք է բերում խոհափիլիսոփայական տարածություն, իսկ Վ. Սարոյանի և Ջ. Դ. Սելենջերի ստեղծագործություններում այն՝ որպես աշխարհագրական եզերք, չկա, կա միայն պատկերի ներքին շերտերում խտացված խոհական դաշտը՝ ինքնատիպ խորհրդանշական շեշտադրումներով: Տարեկանի արտը՝ որպես գրական երկխոսության հանգրվան, երեք հեղինակների մոտ հարցադրումների և գաղափարական շեշտադրումների հետաքրքիր խոհափիլիսոփայական տարածություն է ստեղծում, որտեղ տեսանելի են դառնում յուրաքանչյուր հեղինակի աշխարհայացքային ինքնատիպ շերտերը:

¹ Սարոյան Վ., Ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1987, էջ 162:

Ջ. Դ. Մելինջերը ամերիկյան գրականության հետաքրքիր հեղինակներից է, որը «Տարեկանի արտում՝ անդունդի եզրին» վեպում փորձում է դեռահաս պատանու աչքերով քննել ամերիկյան աշխարհը, այդ եզերքի քաղաքակրթության սահմանները, մարդկային հարաբերությունները, բարու և գեղեցիկի իրականության հետ բախումից ծնված ցավալի զգացողությունները և դրանից աղարտված մարդկային հոգիները: Ջ. Դ. Մելինջերի գրական աշխարհը յուրօրինակ մի հոգևոր տարածություն է, որտեղ հեղինակը և ընթերցողը շատ մտերիմ են, որտեղ լուռ գրույց է գրողի և ընթերցողի միջև: Այս մասին հետաքրքիր դիտարկում է անում վեպի հերոսը. «Ինձ դուր են գալիս այնպիսի գրքեր, որոնք կարդալուց հետո անմիջապես մտածում ես՝ ինչ լավ կլիներ այդ գրողը քո բարեկամը լիներ, որ ցանկացած ժամանակ կարողանայիր զանգահարել և զրուցել հետը: Բայց այդպես հազվադեպ է լինում»: Իր ընթերցողի նման (վեպում շատ են ինքնակենսագրական տարրերը) հավանաբար ինքն էլ, կարդալով XVIII դարի շոտլանդացի բանաստեղծ Ռ. Բրնսի պոեզիան, ցանկություն է ունեցել նրա հետ զրուցելու, իր հոգու դռները բացելու նրա խոսքի տիեզերական տարածության առջև և խոհերի ու մտորումների անսահման ավելետումների մեջ գտնելու երկխոսության այն հոգևոր տարածությունը՝ տարեկանի արտը, որը որպես պատկերային կառույց պետք է դառնար իր վեպի խորագիր՝ խտացնելով գրողի աշխարհայացքային շերտերը: Հավանաբար նույն զգացողություններն է ունեցել նաև Վ. Սարոյանը, որի համար Ռ. Բրնսի «Այգու դուռը թաքուն բացել» բանաստեղծությունը կենսական մեծ ազդակներ է տվել «Տարեկանի արտում» պիեսի պլոտային և թեմատիկ շեշտադրումների համար: Տարեկանի արտ գեղարվեստական պատկերը վերոնշյալ գրողների համար դարձել է յուրօրինակ երկխոսության հանգրվան, որտեղ նրանց հոգևոր գրույցը դառնում է ստեղծագործական ներշնչանքի աղբյուր, աշխարհը և մարդուն քննելու ինքնատիպ խոհական տարածություն, որտեղ ժամանակը՝ որպես հարահոս կյանքի խորհրդանիշ, մարդը՝ որպես տարակերպ կեցության խորհրդանիշ, դառնում են գեղարվեստական պատկերի խոհափիլիսոփայական հիմքը:

Ջ. Դ. Մելինջերի հերոսը՝ Հուլդենը՝ դեռահասի քննախույզ հայացքով, յուրահաստուկ մտածողությամբ պատանին, ներքին խռովք ունի աշխարհի և մարդկանց հանդեպ: Աշխարհընկալման իր ինքնատիպ գնահատումներով նա անվերջ բախումների մեջ է ուսուցիչների, ընկերների հետ: Նա չի սիրում անընդհատ կրկնվող պարտադիր թեմաներն ու դրանց կաղապարված վերլուծությունները, որոնք կյանքը դարձնում են ձանձրալի: Այդ կաղապարներից դուրս հնչող նոր և հետաքրքիր միտք կամ պատմություն շատ ավելի հոգեհարազատ են նրան, որը ստիպում է մարդուն անընդհատ նորի և առեղծվածայինի դաշտում ավելի կատարելագործվել և հմտանալ: Սակայն,

¹ Մելինջեր Ջ. Դ., Վիպակներ և պատմվածքներ, Երևան, 1978, էջ 27:

որպես օրենք՝ «այն երեխաները, որոնք միշտ միևնույն թեմայի մասին են պատմում, ամենաբարձր գնահատականներն են ստանում» (էջ 189), իսկ ընդհանուր թեմայից դուրս ցանկացած խոսքին ի պատասխան՝ հնչում է միջավայրի «շեղվեցիր» հորդոր-հրամանը, որը զայրացնում է նրան, որովհետև մարդկային պրպտուն միտքը հափշտակվում է առավել հետաքրքիր ու նոր պատմություններով: Եվ չկարողանալով հետաքրքրություններին հագուրդ տալ՝ նա անվերջ բախումների մեջ է ուսուցիչների հետ: Միայն միստր Անտոլինին է հասկանում նրան և խորհուրդ տալիս. «Լավ, երբ դու կհաղթահարես բոլոր այդ միստր Վինսոններին, կսկսես ավելի ու ավելի մոտենալ (իհարկե, եթե ցանկանաս, եթե ձգտես, սպասես դրան), ավելի կմոտենաս այն գիտելիքներին, որոնք մոտ են քո սրտին: Ու այդ ժամանակ կպարզես, որ դու առաջինը չես, որոնց շփոթություն, վախ, նույնիսկ զզվանք են պատճառել մարդիկ ու նրանց արարքները: Կհասկանաս, որ միայն դու չես զգացել այդ բանը, և դա կուրախացնի, սատար կլինի քեզ: Շատ շատերն են ապրել այդ շփոթությունը բարոյական և հոգեկան հարցերում, որն ապրում էս դու հիմա... Բարեբախտաբար, նրանցից ոմանք գրի են առել իրենց ապրումները: Դու նրանցից շատ բան կտվորես, եթե, իհարկե, ցանկանաս: Ինչպես և ուրիշները կտվորեն քեզնից, եթե դու ասելիք ունենաս նրանց: Փոխադարձ օգնությունը հրաշալի բան է: Եվ դա ոչ միայն գիտելիքների ասպարեզում, այլև՝ պոեզիայի, այլև՝ պատմության» (էջ 196):

Ներքին խռովքից ու այդ բախումների պատճառով տարբեր դպրոցներ փոխելուց հետո Հոլդենի համար որպես գիտության ճանապարհի գերագույն խորհուրդ հնչում է միստր Անտոլինիի խոսքը. «Մի առավելություն էլ կտա քեզ ակադեմիական դասընթացը: Եթե բավականաչափ խորանաս գիտելիքների մեջ, պատկերացում կկազմես քո ունակությունների ուղղության և հնարավորությունների մասին: Ինչն է նրա համար ընդունելի, ինչը՝ ոչ: Եվ որոշ ժամանակ հետո կհասկանաս՝ որ մտածելակերպն է քեզ հարմար, որը՝ ոչ: Եվ դա կօգնի երկար ժամանակ չվատնել քեզ հարմարեցնելու համար մի այնպիսի մտածելակերպ, որը բոլորովին պետք չէ, հարմար չէ քեզ համար: Դու կճանաչես իսկական չափսերը և դրանից ելնելով հագուստ կընտրես քո խելքի համար» (էջ 197):

Բայց հոգու հերթական խռովքը նորից մարդկանցից հեռանալու և աշխարհից հեռու մի գողտրիկ անկյունում գոյատևումի իր տեսլականն է հյուսում. ձևանալ որպես խուլ ու համր, փակել հոգու և մտքի դռները մարդկանց առջև, ապրել անտառի եզրի փոքրիկ խրճիթում, որը կլինի ոչ թավուտում, այլ արևոտ տարածքում, որովհետև նրա հոգուն հարազատ են արևաբույր ավերքը, ուր հեռու է մարդկային նենգությունն ու հոգու դատարկությունը... Նա սիրում է արև, արևի ջերմության ուժը, արևի կենսառաք շողերը, որոնք կարող են փոխել կյանքի գորշ գույները և տանել երազ ավեր... Հոգու փոթորկումը փոքր-ինչ մեղմվում է հոգեհմա մի երաժշտության աստվածային ալիքներում, որը մաքրում է ներաշխարհային տխուր գույները, քաղցրածոր

մեղեդուն շաղախված են Ռ. Բրընսի բանաստեղծական տողերը, և տարեկանի արտը դառնում է ընթեցողի և հեղինակի հոգեթով երկխոսության հանգրվան: Այդ երկխոսության լուռ ալիքներում գեղարվեստական պատկերին միաձուլվում է մարդկային հոգին, և սկսվում է հոգու՝ գեղեցիկով հագնալու խորհրդավոր պահը, որտեղ մարդկային հոգին և տիեզերքը միաձուլվում են... Եվ այստեղ՝ գեղարվեստական պատկերի հոգևոր տարածության մեջ, ծնվում է մարդկային կյանքի գոյատևումի իմաստը, ապրելու առաքելության խորհուրդը. «Հասկանո՞ւմ ես, ես պատկերացնում եմ, թե ինչպես փոքրիկները երեկոյան խաղում են վիթխարի դաշտում, տարեկանի արտում: Հազարավոր փոքրիկներ, և շուրջը ոչ մի մարդ, ոչ մի մեծ չկա, բացի ինձնից: Իսկ ես կանգնած եմ զառիթափի եզրին, անդունդի պոնկին, հասկանո՞ւմ ես: Ու իմ գործն այն է, որ բռնեմ երեխաներին, թույլ չտամ, որ սայթաքեն, անդունդն ընկնեն: Հասկանո՞ւմ ես, նրանք խաղում են ու չեն տեսնում՝ ուր են գնում, իսկ ես վազում եմ ու բռնում նրանց, որ ցած չընկնեն: Ահա և իմ ամբողջ աշխատանքը: Պահպանել երեխաներին տարեկանի արտում, անդունդի եզրին: Հասկանում եմ, սա հիմարություն է, բայց միակ բանն է, որ ես ուզում եմ իսկապես: Երևի ես հիմար եմ» (էջ 180):

Ըստ տեսաբան Ռ. Բարտի՝ տեքստը ավարտված իրողությունն չէ, այլ կայանում է մեր աչքի առաջ՝ «միանալով ուրիշ տեքստերին, ուրիշ կողերի (ինտերտեքստայնության ոլորտը) հետ՝ դրանով իսկ կապված լինելով հասարակության հետ, պատմության հետ, բայց կապված լինելով ոչ թե պատճառահետևանքների, այլ քաղվածքների իմաստով: Տեքստի հիմքը կազմում է ոչ թե նրա ներքին, փակ ստրուկտուրան, որ ենթակա է սպառիչ ուսումնասիրության, այլ նրա դուրս գալը դեպի ուրիշ տեքստեր, ուրիշ կողեր, ուրիշ նշաններ. տեքստը գոյություն ունի սուսկ միջտեքստային հարաբերություններում, ինտերտեքստայնության ուժով»¹:

Բարտյան տեքստի ժամանակի մեջ հարահոս ընթացքի և այլ տեքստերի մեջ տրոհվելու ու տարրալուծվելու պատկերակերտման ուժով Ռ. Բրընսի տարեկանի արտ գեղարվեստական պատկերը, միավորելով ժամանակատարածական հեռավոր սահմանագծեր, տրոհվել է նաև Վ. Մարոյանի գեղագիտական պատկերային համակարգում՝ ձեռք բերելով խոհափիլիսոփայական գնահատումների ինքնատիպ դաշտ: Եթե Ջ. Դ. Մելինջերի պատումում խորագրի ընտրությունը բացատրվում է հերոսի հուզական աշխարհի և Ռ. Բրընսի գեղարվեստական պատկերի՝ տարեկանի արտի խոհական տարածությունների գուգադրմամբ, ապա սարոյանական խոսքում ոչ մի տեղ չի նշվում տարեկանի արտ պատկերի մասին: Միայն խորագրում է երևում այդ բառապատկերը, որը պիեսի սյուժետային գործողություններում ստանում է խոհափիլիսոփայական գնահատումների տարածություն՝ դառնալով մար-

¹ **Барт Р.**, Избранные работы. Семиотика, поэтика, Москва, 1994, с. 424-428.

դու և աշխարհի հարաբերման մաքրամաքուր հոգևոր տարածության խորհրդանիշ: Վ. Սարոյանի գեղագիտական հավատամքն էր «օգնել մարդուն մարդ լինել», իսկ դրա լավագույն ճանապարհը դեպի մարդու նախաստեղծ վիճակի մաքրամաքուր եզերքին հոգեբանորեն մոտ լինելն է: Դա է քաղաքակրթության զարգացմանը զուգահեռ կյանքի հարահոս ընթացքում մարդու մեջ մարդկայինը պահելու հոգևոր ուժը: Քաղաքակրթության նվաճումները մարդուն օտարում են իր իսկ հոգևոր աշխարհի մարդակենտրոն օրենքներից: Մեծ աշխարհի օրենքները, որոնք հյուսվում են անդամ ու անհոգի քաղաքակրթության պահանջներով, մարդուն հեռացնում են մարդկային աշխարհի ու տիեզերքի այն սահմանագծից, որտեղից սկիզբ է առնում մարդու երկրային կյանքը: Բոլոր ժամանակների կարևորագույն հոգևոր բախումների ներքին ցնցումներից է հյուսվել մարդախույզ պրպտումներից ծնված սարոյանական խոհափիլիսոփայությունը: Նա ևս Ջ. Դ. Մելինջերի հերոսի նման ուզում է ունենալ այն փրկչի առաքելությունը, որը պատրաստ է փրկելու տարեկանի արտում՝ անդունդի եզրին, գտնվող մարդուն, ով անպաշտպան է և այնքան հեռու մարդկային նենգ օրենքներից. նրա վեհագույն նպատակն է հնարավորինս մարդուն ամուր պահել տարեկանի արտում, որը դառնում է մարդու նախաստեղծ վիճակի մաքրամաքուր եզերքի խորհրդանիշ: «Ես պատմող եմ, ու իմ պատմությունը մեկն է՝ մարդու մասին աշխարհում: Ես չեմ հավատում քաղաքակրթությանը, և առաջադիմությունը ինձ չի ոգևորում: Երբ ինչ-որ տեղ հսկայական կամուրջ է կառուցվում, ես հիացմունք չեմ ապրում, երբ ինքնաթիռները կտրում են Ատլանտյան օվկիանոսը, ես չեմ մտածում. «Ինչ զարմանալի դար է»... Մարդը՝ ահա այն միակ բանը, որ ինձ հետաքրքրում է: Կյանքը սիրում եմ, մահին համակերպված եմ... բայց ես մերժում և ատում եմ բռնությունը, սուր կերպով ատում եմ բոլոր նրանց, ումից այն սկիզբ է առնում, ովքեր գործադրում են այն: Անարդարությունը, կենդանի մարդու մատն անգամ ցավեցնող դաժանությունը ես ավելի սարսափելի և կործանարար եմ համարում, քան մարդու բնական մահը: Եվ երբ բազմաթիվ մարդկանց ոչնչացնում են պատերազմներում, ես այնպիսի ցավ ու վիշտ եմ ապրում, որ մոտ է խելագարությանը... Ես իմ ուժերի չափով աշխատում եմ մարդուն վերադարձնել դեպի իր բնական արժանապատվությունն ու ազնվականությունը: Ես մարդուն ուզում եմ վերադարձնել ինքն իրեն, ամբոխից վերադարձնել իր սեփական մարմնին ու ոգուն»¹:

Սարոյանական կենսափիլիսոփայության առանցքը մարդն է, մարդկային հոգու ներդաշն գոյությունը կեցության իր բարդ ու հակասական ձևերի հետ: Մարդ արարածը լինելիության իր նախակետում՝ լույս աշխարհ գալու

¹ **Սարոյան Վ.**, Ընտիր երկեր, հ. 4, Երևան, 1987, էջ 421 (այսուհետև այս գրքից մեջբերումները կտրվեն շարադրանքում):

պահին՝ այդ առեղծվածային պահի տարածական սահմաններում, աստվածային անաղարտության կրողն է՝ հեռու նենգ ու դժնի օրենքներից: Վ. Սարոյանը մարդու և աշխարհի հարաբերության բախումներից ծնված հույզերի քննության կենտրոնում դնում է մի հարց. մարդը ինչպե՞ս կընդառաջի կյանքի ընթացքին, եթե նախապես իմանա երկրային ճանապարհի՝ ճակատագրով իրեն սահմանված ուղին: Վ. Սարոյանը գտնում է այդ հարցի պատասխանը... Մինչ լույս աշխարհ գալը մարդը գիտի իր երկրային ճամպարհի նկարագիրը... Ու որքան էլ այն լի է դժվարություններով, վայրիվերումներով, անգամ ամենասարսափելի դեպքերի ուղեկցությամբ, միննույնն է, մարդն ուզում է ծնվել, անցնել երկրային ճանապարհի իր բաժին ընթացքը, ու որքան էլ կարճ կամ ցավալի լինի այդ ուղին, միննույնն է ճակատագրով թե նախախնամությամբ քեզ բաժին ընկած երկրային ուղին պարտավոր ես անցնել... Հետաքրքիր է, որ սարոյանական պատումում մարդը կեցության իր ձևով լույս աշխարհ գալու պահին և երկրային ճանապարհի վերջակետում նույնն է: Այսինքն՝ ծնվելու պահին նա ունենում է նույն տեսքը, ինչ մահվան օրը: Իսկ ծնվելուց անմիջապես հետո նա մոռանում է ամեն ինչ իր անցնելիք ճանապարհի մասին: Ո՞րն է սարոյանական կենսափիլիսոփայության խորհուրդը. տարեկանի արտ պատկերային տարածությունը խորհրդանշում է այն անաղարտ եզերքը, որտեղ մարդը լինում է ծնվելու պահից հետո: Թեև պիեսի գործողությունների զարգացման ընթացքում ոչ մի տեղ չի նշվում տարեկանի արտ անվանումը, այնուամենայնիվ սարոյանական խոսքի ենթատեքստում կա այդ պատկերի խոհափիլիսոփայական տարածությունը, որը սարոյանական գաղափարական շեշտադրման հենքն է, աստղծր, որի վրա կառուցվում է մարդու և աշխարհի հարաբերությունների սարոյանական կենսամտածողությունը: Վ. Սարոյանը գտնում է այն կենսական տարածությունը, որտեղ մարդ ներդաշնակ է ինքն իր հետ, ամբոխից հեռու ինքը հավատարիմ է իր էությանը և ներքին զգացողություններին: Ջ. Դ. Մելինջերի հերոսի նման նա էլ որպես փրկության եզերք տեսնում է տարեկանի արտը՝ մանուկների անաղարտ աշխարհը, որտեղ ամեն ինչ մաքուր է, հեռու չարիքից ու անօրինություններից: Դա է պատճառը, որ սարոյանական խոսքում մարդը ծնվելուց անմիջապես հետո մոռանում է ճակատագրով իրեն սահմանված ընթացքի մասին: Երկրային ճանապարհի նրա ուղին սկսվում է մաքրամաքուր մի տարածության վրա՝ մանկության կապույտ եզերքում, որտեղ մարդկային անարդարությունները դեռ չեն թափանցել: Ջ. Դ. Մելինջերի հերոսը ցանկանում է լինել այդ եզերքում, պահպանել մանկան անաղարտ հոգին կյանքի խենթ ու փոթորկուն ալիքներից: Վ. Սարոյանն էլ իր մտքի տիեզերական ուժով ուզում է փրկել մարդուն, հավերժ նրան պահել տարեկանի արտի հոգևոր մաքրության մեջ և կատարյալի սահմաններում՝ հեռու քաղաքակրթության կործանարար օրենքներից...

Սարոյանական խոսքն սկսվում է այուժետային հետաքրքիր դրվագով. լույսի և աստղերի շարժման ամբողջ տարածության մեջ լսվում է տիեզերա-

կան մի ձայն, որը մարդկանց ճանապարհում է դեպի երկրային աշխարհ: «Հիմա դուք գիտեք ձեր ճակատագիրը, բայց հենց աշխարհ ելնեք, շունչ քաշեք, ամեն ինչ կմոռանաք: Ասեմ, որ դրա համար աստուծուց կարող եք շնորհակալ լինել: Ձեզնից ամեն մեկին սպասվում են լավ ու վատ բաներ: Աշխարհը դեռ նոր է, և ձեզ այնտեղ ուղարկելու միտքը առայժմ չի արդարացրել իրեն: Չնայած ժամանակին երևի կարդարացնի» (էջ 163): Աշխարհաստեղծման աստվածային ընթացքը ճիշտ է. մարդը նախապես չպետք է իմանա երկրային ճանապարհի իր բաժին դժվարությունների մասին, այլապես այդ ծանր զգացողությունները մեծագույն անջրպետ կստեղծեն մարդու և նրա երազանքների, ձգտումների, նպատակների միջև: Եվ վերջապես, կյանքի հետաքրքրությունը կկորչեր, եթե մարդն իմանար իր վաղվա օրվա ընթացքի մասին: Իսկ ինչո՞ւ դեռ չի արդարացված մարդուն աշխարհ ուղարկելու աստվածային միտքը... որովհետև մարդն աշխարհ է գալիս կատարյալ՝ որպես աստվածային կատարելության կրող: Նրա այդ տեսակը պահպանվում է միայն մանկության ճանապարհի ընթացքում, հետո՝ հասունության տարիներին գուցահեռ, կյանքի խենթ ու փոթորկուն ալիքների մեջ աղարտվում է մանկության այդ մաքրամաքուր եզերքը: Ու քանի դեռ այդ անարատ եզերքի հոգևոր տարածությունը չի ընդգրկում մարդու երկրային ճանապարհի ամբողջ ընթացքը, ուրեմն դեռ արդարացված չէ մարդուն կյանք տալու աստվածային կանխորոշումը: Աշխարհաստեղծման փիլիսոփայության հիմքում մարդու աստվածային շնորհի՝ արարման խորհրդի, մարդաստեղծման ուժի վեհագույն խորհուրդն է, որը, ավա՛ղ, մարդն ինքն է հաճախ աղարտում: Եվ ի վերջո, պատերազմները դառնում են այդ սուրբ առաքելության հակադիր իրողություն: Ո՞վ է մարդուն իրավունք տվել մարդուց խլելու երկրային մեծագույն պարզև՝ կյանքը... «– Բա որ ամեն մեկը մյուսի եղբայրն է, էլ ինչի՞ համար են պատերազմ անում, դրա հերն անիծած: – Կներես, բայց իմ կարծիքով, աշխարհը զգվելի է: Իմ կարծիքով, մարդկային ցեղը պիղծ է ու գարշելի: Իմ կարծիքով, ստորություն է, որ մարդկանց դուրս են գցում աշխարհ» (էջ 167): Բայց Վ. Սարոյանը հավատում է մարդու մարդ մնալու կարողության ուժին, նրա՝ կյանքի ու մահվան խաչմերուկներում ձևավորված կենսափիլիսոփայության հզոր ուժով ճակատագրով իրեն բաժին հասած ցավից ու դժվարություններից իմաստնանալու, ավելի ուժեղանալու և տիեզերքի անձայրության մեջ հավերժող ճամփորդ դառնալու խորհրդին՝ մահվան դեմ դնելով իր տեսակը շարունակելու աստվածաշնորհ առաքելությունը: «– Սպրել... ու մեռնել: Երկուսն էլ գեղեցիկ են, Բույ: Սպրել ու մեռնելն աշխարհում: Էդ հսկայական, մեծ, փոքր պատլիկ տեղում: Ու հենց առաջին անգամ շունչ քաշեցիր, չէ՞, արդեն ինչ-որ մեկն ես՝ դու» (էջ 165): Ուղղակի պետք է յուրաքանչյուր մարդ, որքան էլ հոգու և հույզերի փվածքները օտարեն իրեն իր նախաստեղծ վիճակից, իր տեսակով, կեցության իր ձևով հնարավորինս պահպանի այն աստվածային մաքուր ու ներդաշնակ տարածությունը՝ տարեկանի արտը, որը ճակատագրով բաժին է ընկնում

իրեն լույս աշխարհ գալուց հետո...

Մարդկային կեցության ճանապարհի այդ կետը՝ տարեկանի արտը, ձևավորվելով որպես երեք գրողների գրական երկխոսության հանգրվան, ընդլայնվում է՝ դառնալով մարդկային գոյի, նրա ճանապարհի հետագծի լուսեղեն ընթացքի պահպանման խորհրդանիշ: Այն հարցին, թե հանուն ինչի է ստեղծագործում գրողը, Վ. Սարոյանը պատասխանել է՝ հանուն մարդու առավել բարօրության և վեհության: «Կարծում եմ, – գրել է Վ. Սարոյանը, – արվեստի դերն այն է, որ թափառումների ուղին բռնած մարդկությանն ապահովի ավելի լավ մշակված, հուսալի մի քարտեզով, որը նրան ցույց կտա դեպի ինքն իրեն տանող ճանապարհը» (էջ 431): Իսկ այդ քարտեզի կառուցման կարևորագույն հենքը կլինի այն մաքուր տարածությունը՝ տարեկանի արտը, ուր մարդն իր նախաստեղծ վիճակի ներդաշն կեցության ձևի մեջ հնարավորինս դառնա հավերժող ճամփորդ, որը գտել է մարդու և աստվածային կատարելության սահմանագիծը, որը տանում է մարդուն դեպի մարդը...

Արմենուհի Արզումանյան – *Գեղարվեստական պատկերը՝ որպես գրողների երկխոսության հանգրվան. Ռ. Բրնս, Վ. Սարոյան, Ջ. Դ. Սելինջեր*

Տարեկանի արտ գեղարվեստական պատկերը՝ որպես գրական երկխոսության հանգրվան, միավորել է երեք տաղանդավոր հեղինակների՝ Ռ. Բրնս, Վ. Սարոյան, Ջ. Դ. Սելինջեր: Ռ. Բրնսի մոտ տարեկանի արտը՝ որպես աշխարհագրական իրողություն, տեսանելի է: Բանաստեղծական խոսքում այն ձեռք է բերում խոհափիլիսոփայական տարածություն, իսկ Վ. Սարոյանի և Ջ. Դ. Սելինջերի ստեղծագործություններում այն՝ որպես աշխարհագրական եզերք, չկա, կա միայն պատկերի ներքին շերտերում խտացված խոհական դաշտը՝ ինքնատիպ խորհրդանշական շեշտադրումներով: Տարեկանի արտը՝ որպես գրական երկխոսության հանգրվան, երեք հեղինակների մոտ հարցադրումների և գաղափարական շեշտադրումների հետաքրքիր խոհափիլիսոփայական տարածություն է ստեղծում, որտեղ տեսանելի են դառնում յուրաքանչյուր հեղինակի աշխարհայացքային ինքնատիպ շերտերը:

Арменуи Арзуманян – *Художественный образ как этап литературного диалога: Р. Бернс, В. Сароян, Дж. Д. Сэлинджер*

Ключевые слова – словесное изображение, философское пространство, эстетическая система, литературный диалог

Художественный образ ржаного поля, как этап литературного диалога, объединил трех талантливых авторов: Р. Бернса, В. Сарояна, Дж. Д. Сэлинджера. У Р. Бернса ржаное поле зримо, как географическая реальность. В поэтическом слове оно приобретает философское пространство, а у В. Сарояна и Дж. Д. Сэлинджера его нет как географического края – есть только осмысленное поле, сконцентрированное во внутренних слоях образа со своеобразными символическими акцентами. Ржаное поле,

как этап литературного диалога, создает у трех писателей интересное философское пространство с вопросами и идейными акцентами, пространство, где становятся зримыми самобытные слои мировоззрения каждого автора.

Armenui Arzumanyan – *Artistic Image as a Stage of Literary Dialogue: R. Burns, V. Saroyan, J. D. Salinger*

Key Words – Verbal representation, philosophical space, aesthetic system, literary dialogue

The artistic image of the rye field, as a stage of literary dialogue, has brought together three talented authors – R. Burns, V. Saroyan, and J. D. Salinger. This point of the path of human existence – the rye field, as a stage of literary dialogue of the three writers – expands the light course of the trajectory of its path becoming a symbol of human existence. In R. Burns's work the rye field as a geographical reality is visible. In poetic speech it takes on a philosophical space, whereas in the works of V. Saroyan and J. D. Salinger it is not depicted as a geographical reality, it is only an imagery field, concentrated in the inner layers of the image with peculiar symbolic accents. The rye field, as a stage of literary dialogue, creates an interesting philosophical space of thoughts and ideologies for the three authors, where the unique worldview layers of each author become visible.

Ներկայացվել է 12.04.2021

Գրախոսվել է 21.04.2021

Ընդունվել է տպագրության 06.07.2021